

Այս պարզարանութենէն յետոյ, կը յայտնեն որ նախնական մարդու և արդի վայրենի մարդու մէջ եղած հիմնական նմանութիւնը կը թողարտէ ենթադրել, որ քանի մը ցեղեր վայրենութեան վիճակէն կարողացան բարձրանալ ներկայ քաղաքակրթութեանը :

Արդ. ներկայիս մէջ Քիւրդերը, ընկերաբանական տեսակէտէ առնելով, կը գտնուին քաղաքակրթութեան նախնական, վայրենի, և միջինէն վար աստիճաններու զանազանութեանց վրայ. անոնք ունին այժմ պատմական ձևերու ար կազմը. — Բիսանիք (famille). Կենս = ջընս (gens). ցեղ (tribu). քաղաքային ժողովուրդ (cité). և չեն հասած դեռ Ազգ (nation) կազմութեան :

Հիմա մենք կ'անցնինք անոնց պատմական հետազոտութեան, և կատարուած հին ու նոր ուսումնասիրութիւններուն :

ՆԵՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ  
(Քիւրդերու ծագումի մասին. Հնդեւրոպական նիւղին պատկանիլը. Ազգերու հետ ունեցած պատմական ստնչութիւնը. իրենց քաղաքական արժէքը ներկայի տեսակէտէն)

Անկարելի է միայն ներկայի պայմաններով ու իրողութիւններով ճանչնալ ցեղ մը, անոր նոյն իսկ ներկայի գնահատութիւնը ու ապագային ուղղեալ ընթացքը :

Ցեղագէտները ցեղը բնորոշելու համար անհրաժեշտ կը գտնեն պատկերացնել անոր հոգեբանական ու ֆիզիքական յատկանիշերը : (\*)

(\*) Loi psychologiques de l'Evolution des peuples, par Gustave le Bon. 1906, Paris.